ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

2024Թ. 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԿԻՐԱԲԵՐԵԼ

zinapah.am

Բովանդակություն

ՋԻՆԱՊԱՀԻ կառավարումը և ֆինանսական վերլուծությունը

Կառավարման մարմինը և գործադիր թիմը
Ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները
Գլխավոր գործադիր տնօրենի խոսքը
Գործառնությունները 2017 – 2024թթ.
Շահառուները և վճարված հատուցումները 2024թ. 1-ին եռամսյակ
Նվիրատվությունները 2017 – 2024թթ. 1-ին եռամսյակ
Շահառուներին միտված սոցիալական ծրագրեր և համագործակցություն
Զարգացման ուղին դեպի անկախություն

Կառավարման մարմինը և գործադիր թիմը

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հոգաբարձուների խորհուրդ

Իրինա Սեյլանյան
Խորհրդի նախագահ

Ադամ Կաբլանյան
Խորհրդի անդամ

Ժոզեֆ Սիմոնյան
Խորհրդի անդամ

Անահիտ Ադամյան
Խորհրդի անդամ

Դավիթ Հակոբյան
Խորհրդի անդամ

Թիմ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Սահակյան
Ներքին աուդիտ

Տաթևիկ Յաղջյան
ԳԳՏ տեղակալ
Գործառնությունների գծով տնօրեն

Լուսինե Զուրաբյան
Ֆինանսական տնօրեն

Սմբատ Սահյան
Հատուցումների գծով տնօրեն

Նարինե Գալստյան
Հանրային կապերի և հաղորդակցության տնօրեն

Իզաբելլա Մանասարյան
Դոնորների հետ հարաբերությունների և ֆոնդհայթայթման մենեջեր

Մնացական Ավետիսյան
Հատուցումների համակարգող

Հրաչիկ Ավթանդիլյան
Հատուցումների համակարգող

Արփինե Զարգարյան
Սոցիալական ծրագրերի համակարգող

Ֆելիքս Չիլինգարյան
Պորտֆելի կառավարիչ

Լիլիթ Ղաբուզյան
Հաշվետար

Վազգեն Մարտիրոսյան
SS ծրագրի մենեջեր

Մարի Բոյաջյան
Ադմինիստրատիվ օգնական

Նարե Ատոմյան
Ադմինիստրատիվ օգնական

ՁԻՆԱՊԱՀԻ ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

ՁԻՆԱՊԱՀԸ ստեղծվել է 2017թ.՝ հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին, 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին կայուն ֆինանսական հատուցումներ տրամադրելու նպատակով՝ հանուն ապագա սերունդների խաղաղության ու անվտանգության:

2023թ. ապրիլին հիմնադրամը, որը հայտնի էր **որպես Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ, վերանվանվեց ՁԻՆԱՊԱՀ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի:** Հիմնադրամը ապաքաղաքական կառույց է և գործում է համաձայն ՀՀ Օրենքի:

ՁԻՆԱՊԱՀԸ եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր վճար է կատարում իր աշխատավարձից: ՁԻՆԱՊԱՀԸ համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

ՁԻՆԱՊԱՀԻ միջոցները գոյանում են՝

- Հայաստանի հարկատուների կողմից վճարվող պարտադիր վճարներից (1,500-15,000 ՀՀ դրամ՝ կախված ամսական եկամուտից)
- Նվիրատվություններից, որոնք ստացվում են ողջ աշխարհից, այդ թվում՝ Հայաստանից
- ՁԻՆԱՊԱՀԻ ակտիվների կառավարումից ստացված արժևորումից

ՁԻՆԱՊԱՀԻ կառավարման բարձրագույն մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է, որը կազմված է բարձր հեղինակություն վայելող փորձառու մասնագետներից՝ ֆինանսների և բանկային գործի, բիզնեսի, ճգնաժամային կառավարման, դրամահավաքի և ակտիվների կառավարման ոլորտներում:

ՁԻՆԱՊԱՀԻ գործառնական կառավարումը իրականացվում է բարձր մոտիվացիայով և փորձառու գործառնական թիմի կողմից:

ՁԻՆԱՊԱՀԻ կայքը արտացոլում է բոլոր ֆինանսական հոսքերը՝ նվիրատվությունները և պարտադիր վճարները, ինչպես նաև հրապարակում է շահառուների ցանկը և կատարված հատուցումները: ՁԻՆԱՊԱՀԻ կայքում հրապարակվում են նաև գլխավոր գործադիր տնօրենի եռամսյակային, տարեկան հաշվետվությունները և աշխարհի լավագույն 10 աուդիտորական ընկերություններից մեկի կողմից իրականացված Տարեկան աուդիտի հաշվետվությունները:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին՝ ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լինել սոցիալապես պատասխանատու հիմնադրամ զինծառայողների համար, որն իր մեջ ներառում է պարտադիր և կամավոր ապահովագրական հատուցումները:

ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր պարտքն է կանգնել զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած մեր զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին:

ՆԱԽԱԲԱՆ

Կարինե Սարգսյան
Գործադիր գլխավոր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ

ԶԻՆԱՊԱՀ համայնքի հարգելի բարեկամներ,

Ուրախ եմ կիսվել ձեզ հետ ԶԻՆԱՊԱՀԻ 2024թ. 1-ին եռամսյակի հաշվետվությամբ: Ուզում եմ առանձնահատուկ կերպով ընդգծել, որ թե՛ ԶԻՆԱՊԱՀԻ հոգաբարձուների խորհուրդը, թե՛ գործադիր թիմը մեծ ջանքեր են դնում նոր նախաձեռնություններ իրականացնելու և ԶԻՆԱՊԱՀԸ մեր զինծառայողների և նրանց ընտանիքների նվիրմանն ու զոհողությանը արժանի կառույց դաձնելու ուղղությամբ:

2017թ. մինչև 2024թ. 1-ին եռամսյակի ավարտը ԶԻՆԱՊԱՀԸ ֆինանսական հատուցումներ է տրամադրել **5,345** զինծառայողների ընդհանուր առմամբ **91.5 մլրդ** ՀՀ դրամի չափով:

ԶԻՆԱՊԱՀԻ միջոցների շուրջ **150 մլրդ** ՀՀ դրամը ձևավորվել է պարտադիր դրոշմանիշային վճարներից, **18 մլրդ**՝ ակտիվների կառավարումից և **9.4 մլրդ**՝ նվիրատվություններից:

Ի նշան հարգանքի, գնահատանքի և ազգովի մեր երախտագիտության մեր շահառուներին, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերեցին մեր հայրենիքի համար, մենք պարտավորվում ենք անել հնարավորը մեր զինծառայողներին և նրանց ընտանիքներին սատար կանգնելու և բարեկեցիկ կյանք ապահովելու համար: Առաջնորդվելով այդ սկզբունքով՝ ԶԻՆԱՊԱՀԻ հոգաբարձուների խորհրդի 2024թ. հունվարի 18-ի նիստի որոշմամբ **ԶԻՆԱՊԱՀԸ վերանայել և ինդեքսավորել է** իր շահառուների՝ հատուցման ամսական վճարվող գումարը՝ **բարձրացնելով 26%-ով 2024թ. հունվարի 1-ից**: Այս փոփոխությունը պայմանավորված է 2017թ. ի վեր եղած գնաճով և արտահայտում է մեր անսասան նվիրումը մեր զինծառայողներին: Այս նախաձեռնության արդյունքում ԶԻՆԱՊԱՀԻ տարեկան պարտավորություններն աճել են 4 մլիդ ՀՀ դրամով:

Հատուցման գումարների բարձրացումը տարածվում է բոլոր ներկա և նոր շահառուների վրա, բացի 3-րդ խմբի զինհաշմանդամներին վճարվող դրամական աջակցության գումարներից: Սակայն առաջիկայում սպասվող օրենսդրական փոփոխություններից հետո ինդեքսավորումը կտարածվի նաև ԶԻՆԱՊԱՀԻ՝ երբևէ 1-ին կամ 2-րդ խումբ ունեցող այն շահառուների վրա, ովքեր այս պահին 3-րդ խմբի զինհաշմանդամներ են: ԶԻՆԱՊԱՀԸ համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության հետ օրենսդրական փոփոխությունների շուրջ, որի արդյունքում հատուցման գումարները կմնան անփոփոխ՝ անկախ հաշմանդամության խմբի վերանայումից: Այս փոփոխությունը ֆինանսական և բարոյական տեսանկյունից մեծ աջակցություն կլինի մեր զինծառայողների համար:

2024թ. խոշոր ծրագրերից է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ԶԻՆԱՊԱՀԻ և Զեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի համատեղ նախաձեռնությամբ ստեղծված ZINHUB միասնական առցանց հարթակի մեկնարկը: Այս հարթակը միավորում և համակարգում է բոլոր այն կազմակերպություններին, որոնք իրականացնում են բազմաթիվ աշխատանքային, սոցիալական, կրթական, վերականգնողական և այլ ծրագրեր: Ներկայումս գրանցված են 27 գործընկեր կազմակերպություններ, որոնց մեծամասնությունը ակտիվորեն տեղադրում է տեղեկատվություն առաջիկա վերապատրաստումների, աշխատանքի հնարավորությունների և տարբեր ծառայությունների վերաբերյալ: Երկար ճանապարհ կա զարգացնելու և խթանելու այս հարթակը, որպեսզի այն դառնա մեր զինծառայողներին և նրանց ընտանիքներին ցուցաբերվող շարունակական աջակցություն կարևոր նախագիծ և ապահովի հասարակության մեջ նրանց սահուն վերաինտեգրումը:

Թափանցիկության, հաշվետվողականության և բարեվարքության մեր արժեքներն անփոփոխ են: Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացու, ինչպես նաև մեր յուրաքանչյուր նվիրատուի, ովքեր վստահում են մեզ մեր առաքելության իրականացման հարցում:

Եկեք համատեղենք մեր ջանքերը ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին և նրանց ընտանիքներին ոգեշնչելու նպատակի շուրջ...

միասին զինվորիս կողքին...

ԶԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2017-2024թթ. Սահող Գնահատականներով (ՍԳ)

2024թ. տարեկան բյուջեն կազմվել է այն մոտեցմամբ, որ պարտադիր դրոշմանիշային վճարների հոսքը նվազելու է 1 միլիարդ ՀՀ դրամով՝ պայմանավորված Արցախից ստացվող պարտադիր դրոշմանիշային վճարների հոսքի դադարով: Սակայն կանխատեղված տարբերությունը լրացվում է Հայաստանում պարտադիր վճարների համեմատաբար կայուն ներհոսքով և ակտիվների կառավարումից եկամտի մոտ 40% աճով՝ պայմանավորված ակտիվների աճով:

Ծախսերի մասով՝ բյուջետավորվել է շահառուներին տրամադրվող հատուցման գումարի 36% աճ՝ պայմանավորված 2023թ. սեպտեմբերի 19-20-ի Արցախի 200 նոր դեպքերով, շահառուների ամսական հատուցման և լրացուցիչ վճարների 26% ինդեքսավորման, ենթակառուցվածքների զարգացման հետ կապված կապիտալ ծախսերի ավելացմամբ:

2024թ. 1-ին եռամսյակի և տարեվերջյան սահող գնահատականով ԶԻՆԱՊԱՀԸ գրանցել է ընդամենը 3% եկամտի աճ՝ պայմանավորված պարտադիր դրոշմանիշային վճարների -2% անկմամբ՝ ի հակադրություն կանխատեսված -4%-ի, ակտիվների կառավարման եկամտի 40% աճով՝ ի հակադրություն կանխատեսված 36%-ի: Ինչ վերաբերում է ծախսերին, կանխատեսված 57% աճը նվազել է 36%-ի՝ ի համեմատություն նախորդ տարվա:

Չնայած ծախսերի աճի՝ վարչական ծախսերի հարաբերությունը ընդհանուր 2023թ. ակտիվներին կազմում է 0.58% սահող գնահատականով, ինչը չի գերազանցում օրենքով սահմանված առավելագույն 2%-ի շեմը:

ՄԼՆ ԴՐԱՄ	2017-2019	2020	2021	2022	2023	2024	2017-2024	2024թ. 2023-ի համեմատ	% հարաբ 2023	% հարաբ 2024
Եկամուտ պարտադիր վճարներից	21,779	9,134	29,072	35,274	43,199	42,482	202,721	-2%	87%	83%
Նվիրատվություններ	305	6,976	1,290	508	273	358	10,014	31%	0.6%	0.7%
Կամուրջ*	-	1,000	1,510	239	237	218	3,204	-8%	0.5%	0.4%
ՀՀԿԲ**	-	-	301	-	-	-	301		0%	0%
Ակտիվների կառավարում	2,545	2,425	1,841	3,256	5,944	8,316	26,082	40%	12%	16%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	-	-	-	-	-	0.69	-100%	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**24,629**	**19,535**	**34,015**	**39,278**	**49,654**	**51,373**	**243,112**	**3%**	**100%**	**100%**
Հատուցումներ	1,635	8,030	44,484	16,878	14,747	20,179	107,586	37%	98%	98%
Վարչական ծախսեր	-	-	-	246	267	329	843	23%	2%	2%
Կապիտալ ծախսեր	-		105	3	45	12	165	-74%	0%	0.06%
Գործառնական ծախսեր	0.32	-	149	21	25	36	233	43%	0.2%	0.2%
Այլ	0.24	-	-	-	-	-	0.47		0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**1,635**	**8,030**	**44,738**	**17,148**	**15,084**	**20,556**	**108,827**	**36%**	**100%**	**100%**

* Կամուրջ – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 39 ամսվա ընթացքում՝ ամսական 300,000 ՀՀ դրամի չափով:

** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

ԶԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2024թթ. 1-ին ԵՌ.

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-2024թթ. 1-ին եռամսյակի և տարեվերջյան սահող գնահատականով եկամուտը և ծախսերը արտացոլված են այս գրաֆիկում՝ ըստ տարիների:

2024թ. նախորդ տարվա համեմատությամբ ակնկալվում է ընդհանուր եկամտի 3% աճ՝ կազմելով 51,373 մլն ՀՀ դրամ: Ընդհանուր ծախսերը 2023թ. համեմատությամբ նույնպես կաճեն 36%-ով՝ պայմանավորված պարտավորությունների աճով՝ կազմելով 20,556 մլն ՀՀ դրամ:

ԶԻՆԱՊԱՀԻ 2017 – 2024թթ. եկամուտը ծախսերի համեմատ. ՍԳ ՄԼՐԴ ՀՀ դրամ



ԶԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2017-2024թթ. 1-ին ԵՌ.

2024թ. 1-ին եռամսյակում ԶԻՆԱՊԱՀԸ գրանցել է եկամտի աճ 14%-ով՝ նախորդ տարվա համեմատությամբ, շուրջ 13,394 մլն ՀՀ դրամ, ինչը պայմանավորված է պարտադիր վճարների 7% աճով, ակտիվների կառավարումից ստացված եկամտի 77% աճով և նվիրատվությունների 9% աճով:

2024թ. 1-ին եռամսյակում ԶԻՆԱՊԱՀԻ եկամտի մասնաբաժինը, որը վերագրվում է պարտադիր վճարներին, կազմել է 84%, ինչը անկում է արձանագրել 5 տոկոսային կետով 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Ակտիվների կառավարումից ստացված եկամուտը 15% աճ է գրանցել և բարձրացել 5 տոկոսային կետով, մինչդեռ նվիրատվությունների մասնաբաժինը կայուն է և կազմում է 1% 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ:

Ընդհանուր ծախսերը աճել են 49% և կազմում են 5,856 մլն ՀՀ դրամ: Հատուցումները աճել են 50%-ով՝ պայմանավորված շահառուներին տրամադրվող հատուցման ամսական գումարների և լրացուցիչ վճարների 26% ինդեքսավորմամբ, ինչպես նաև Արցախի 2023թ. սեպտեմբերի 19-20-ի 200 նոր դեպքերով:

ԶԻՆԱՊԱՀԻ ընդհանուր ծախսերի հատուցումներին վերագրվող մասնաբաժինը կազմում է 99%, իսկ վարչական ծախսերը կազմում են 1% ի համեմատություն 2023թ. համապատասխան 98% և 2%-ների:

ՄԼՆ ԴՐԱՄ	ԵՌ1 2023	ԵՌ1 2024	ԵՌ1-4 2023	ԵՌ1-4 2024	2024-ը 2023-ի համեմատ	ԵՌ1 '24 ԵՌ1 '23 համեմատ	% հարաբ ԵՌ1 2023	% հարաբ ԵՌ1 2024
(ԴՐԱՄ)								
Եկամուտ պարտադիր վճարներից	10,358	11,272	43,199	42,482	-2%	7%	89%	84%
Նվիրատվություններ	63	88	273	358	31%	9%	1%	1%
Կամուրջ*	65	15	237	218	-8%	-79%	1%	0.11%
ՀՀԿԲ**	-	-	-	-	-	-	-	0%
Ակտիվների կառավարում	1,815	2,019	5,944	8,316	40%	77%	10%	15%
Այլ եկամուտներ տուգանքներից	0.26	-	-	-	-100%		0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**12,301**	**13,394**	**49,654**	**51,373**	**3%**	**14%**	**100%**	**100%**
Հատուցումներ	3,576	5,788	14,747	20,179	37%	50%	98%	99%
Վարչ. ծախսեր	64	60	267	330	23%	-2%	2%	1%
Կապ. ծախսեր	43	1	45	12	-74%		0%	0%
Գործառնական ծախսեր	3	7	25	36	43%	22%	0.1%	0.1%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**3,688**	**5,856**	**15,084**	**20,556**	**36%**	**49%**	**100%**	**100%**

* Կամուրջ – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 39 ամսվա ընթացքում՝ 300,000 ՀՀ դրամի չափով:

** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

2024թ. ՍԳ համեմատությունը
2017-2024թթ. հետ. ամփոփ պատկերը

- Պարտադիր վճարների 21%-ը կստացվի 2024թ.
- Ակնկալվում է, որ նվիրատվությունների 4%-ը կստացվի 2024թ.
- Ակտիվների կառավարման եկամտի 31%-ը կձևավորվի 2024թ.
- Հատուցումների 19%-ը կվճարվի 2023թ.

ՄԼՆ ԴՐԱՄ	2023	2024	2017-2024	% հարաբ 2024
Պարտադիր վճարներ	43,199	42,482	202,721	21%
Նվիրատվություններ	273	358	10,014	4%
Ակտիվների կառավարում	5,944	8,316	26,872	31%
Հատուցումներ	14,747	20,179	107,586	19%

ՁԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2024թ. 1-ին ԵՌ.

- **2017-2024թթ. 1-ին ԵՌ.** ՁԻՆԱՊԱՀԸ հատուցում է տրամադրել **5,345** շահառուների:

- 2024թ. 1-ին եռամսյակում հատուցվել են **147 նոր դեպքեր՝ 2023թ. նույն ժամանակահատվածի 52 դեպքերի համեմատ:**

2023թ. 4-րդ եռամսյակի 147 նոր դեպքերի բաշխվածությունը ստորև՝ ըստ շահառուների դասակարգման:

ՁՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	1-ին խումբ	2-րդ խումբ
133	3	1	10

2017 - 2024ԹԹ. 1-ԻՆ ԵՌ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ՝ 5,345 ԴԵՊՔԵՐՈՎ



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2017-2024թթ. 1-ին ԵՌ.

2017-2024թթ. 1-ին եռամսյակի կտրվածքով **5,345 դեպքերը** այս գրաֆիկում բաշխված են ըստ զինվորական կազմի և կոչման:
44%-ը ժամկետային շարքայիններ են, մինչդեռ **31%**-ը զորահավաքային շարքայիններ, սպաներ, **18%**-ը պայմանագրային շարքայիններ և **7%**-ը կամավորներ:

2017-2024ԹԹ 1-ԻՆ ԵՌ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԿՈՉՄԱՆ, 5,345 ԴԵՊՔՈՎ





2017-2024ԹԹ. 1-ԻՆ ԵՌ. ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ

147

Նոր հատուցման դեպքեր 2024թ. 1-ին եռամսյակում և 5,345 դեպքեր 2017-2024թթ. 1-ին ԵՌ.

5.8 մլրդ ՀՀ դրամի

հատուցումներ 2024թ. 1-ին ԵՌ.

91.5 մլրդ ՀՀ դրամի

հատուցում 2017-2024թթ. 1-ին ԵՌ դրությամբ՝ որպես ապահովագրություն զոհվածներին, անհայտ բացակայողներին և հաշմանդամության ապահովագրության իրավունք ունեցողներին

7%

պարտադիր վճարների աճ 2024թ. 1-ին ԵՌ. 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ

ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները 2017-2024թթ. 1-ին ԵՌ. դրությամբ

2017-2024թթ. 1-ին ԵՌ. դրությամբ ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները կազմում են շուրջ 9.4 մլրդ ՀՀ դրամ: Նվիրատվությունների ընդհանուր թիվը կազմում է գրեթե 90,000՝ միջին նվիրատվության գումարը՝ 105,000 ՀՀ դրամ: Ամենաշատ նվիրատվությունները կատարվել են պատերազմական էսկալացիաների ժամանակ:

2024թ. 1-ին եռամսյակի նվիրատվությունների գումարը համեմատած 2023թ. նույն ժամանակահատվածի հետ աճել է 9%-ով: Նվիրատվությունների թիվը աճել է 3%-ով, իսկ նվիրատվությունների միջին չափը նվազել է 5%-ով: Նվիրատվությունների աճը պայմանավորված է ԱՄՆ դոլարով արվող նվիրատվություններով: Այլ արժույթներով կատարվող նվիրատվությունները գրանցել են նվազում: Դա բացատրվում է հետպատերազմյան իրավիճակով, քանի որ պատերազմի ժամանակ նվիրատվությունները սովորաբար կտրուկ աճ են ունենում, ինչն արտահայտվել է 2020թ. արդյունքներում: Նվիրատվությունների ամենամեծ անկումը գրանցվել է ռուբլիով արված նվիրատվություններում՝ պայմանավորված Ռուսաստանի դեմ իրականացվող սանկցիաներով և միջազգային փոխանցումների սահմանափակումներով: Նվիրատվությունները կատարվել են բանկային փոխանցումներով, ինչպես նաև www.zinapah.am կայքի միջոցով:

2017-2024թթ. նվիրատվությունները ըստ արժույթի

Արժույթը, ՝ 000 000	2017-2019	2020	2021	2022	2023	2023 ԵՌ1	2024 ԵՌ1	2017-2024 ԵՌ1	ԵՌ1 2024-Ը ԵՌ1 2023-Ի ՀԱՄԵՄԱՏ
ՀՀ դրամ	296,495	4,380,043	765,793	301,333	173,750	35,023	24,898	5,915,612	-29%
Դոլար	7	4.826	879	492	233	107	152	6,588	-42%
Ռուբլի	162	114,908	6,517	455	1	-	2	122,045	NA
Եվրո	1	797	122	34	20	7	5	980	-35%
2017-2024թթ. նվիրատվությունները ՀՀ դրամով									
	304,611	6,975,856	1,290,065	508,062	273,307	80,753	87,731	9,439,632	9%
Նվիրատվությունների քանակ	2,807	41,769	25,976	12,665	5,209	1,672	1,729	90,155	3%
Նվիրատվությունների միջին չափը	390	167	50	40	52	48	51	105	5%

2017-2024թթ. 1-ին եռամսյակի նվիրատվությունները



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն 2024թ. 1-ին ԵՌ.

ԶԻՆԱՊԱՀԸ համագործակցում է տարբեր հիմնադրամների, ոչ պետական բարեգործական կազմակերպությունների հետ՝ աջակցելով մեր զինծառայողներին և նրանց ընտանիքներին, նրանց ֆիզիկական, հոգեբանական կրթական բարեկեցության ապահովման նպատակով: Հաշվի առնելով շահառուների հետ կապի պահպանման կարևորությունը՝ ԶԻՆԱՊԱՀԻ թիմը քայլեր է նախաձեռնել իր շահառուների հետագա զարգացման սոցիալական ինտեգրման ծրագրերի մեկնարկի ուղղությամբ: ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է ընդլայնել համագործակցող ընկերությունների ցանկը և նոր համագործակցության հուշագրեր է ստորագրում: Մեր նպատակն է համախմբել, միավորել և համակարգել պետական, մասնավոր հատվածը, ՀԿ-ներին, բարեգործական կազմակերպություններին զինծառայողներին և նրանց ընտանիքներին աջակցելու գաղափարի շուրջ:

ՀՀ Կենտրոնական Բանկի նախաձեռնություն/ Ամանորյա համերգ

ՀՀ ԿԲ նախաձեռնությամբ ԶԻՆԱՊԱՀԻ աջակցությամբ հունվարի 12-ին «Հին Նոր տարի» խորագրով ամանորյա միջոցառում էր կազմակերպվել արցախյան պատերազմի մասնակից՝ զոհված և անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների երեխաների համար: Միջոցառմանը մասնակցեցին շուրջ 400 երեխաներ, որոնց բարձր տրամադրությունը ապահովեցին «Արևիկ» երգչախմբի տաղանդավոր սաները: Համերգի ավարտին երեխաները ստացան նաև ամանորյա անակնկալ նվերներ, որոնք խնամքով պատրաստել էին ՀՀ Կենտրոնական բանկի աշխատակիցները:

Հայկական հոգևոր վերականգնման հիմնադրամի նախաձեռնություն

Նպատակ ունենալով աջակից դառնալ հետպատերազմյան տրավմատիկ սինդրոմներ ունեցող պատերազմական գործողությունների անմիջական մասնակիցներին, նրանց ընտանիքների անդամներին, Արցախից բռնի տեղահանվածներին՝ Հայկական հոգևոր վերականգնման հիմնադրամի կողմից կազմակերպված համայնքային հանդիպումների շարքի 2-րդ եզրափակիչ փուլում մասնակցում էին ԶԻՆԱՊԱՀԻ շուրջ 60 շահառուներ:

Համայնքային 2-րդ ավարտական փուլի հանդիպումներն իրականացվեցին Մասիսում, Աբովյանում, Երևանում, Արմավիրում, Գյումրիում և Վանաձորում:

Երևանյան ամփոփ հանդիպման մանրամասները **տեսանյութում**:

ZINHUB առցանց հարթակ

2023թ. մեկնարկից հետո ZINHUB հարթակում գրանցվել են շուրջ 27 գործընկեր կազմակերպություններ, որոնց մեծամասնությունը ակտիվորեն տեղեկատվություն է տարածում պլանավորվող դասընթացների, աշխատանքի հնարավորությունների և տարբեր ծառայությունների մասին՝ սկսած 2024 թվականի փետրվարից:

ZINHUB-ը մշակվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ԶԻՆԱՊԱՀԻ և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի համագործակցությամբ՝ Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի շրջանակում, որը ներառում էր համագործակցություն գործընկեր ՀԿ-ների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ: Գործընկեր կազմակերպությունները հնարավորություն ունեն գրանցվել հարթակում և հրապարակել կրթական դասընթացներ, վերապատրաստման ծրագրեր և աշխատանքի հնարավորություններ:

ZINHUB-ի շահառուները, նրանց ընտանիքի անդամները, ինչպես նաև խոցելի խմբերը կարող են հեշտությամբ հարթակում գտնել հասանելի աշխատանքի առաջարկների, վերապատրաստման դասընթացների և այլ նախաձեռնությունների վերաբերյալ հայտարարություններ:

ԶԻՆԱՊԱՀԻ նախաձեռնություն. հանդիմում շահառուների հետ

2024թ. մարտի 19-ին կայացավ հանդիպում ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների հետ: Հրավիրված էին Արցախից բռնի տեղահանված 2023թ. սեպտեմբերի 19-20-ին զոհված, անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքների անդամները և զինհաշմանդամներ: Հանդիպման ընթացքում շահառուներին ներկայացվեց ԶԻՆԱՊԱՀԻ առաքելությունը, ստեղծման պատմությունը և նորություններ: Կարևորելով շահառուների տեղեկցվածության բարձրացումը՝ շահառուներին ներկայացվեցին նաև շահառու ճանաչվելու գործընթացը, ֆինանսական գրագիտության կարևոր կետեր: Շահառուներին ներկայացվեց նաև ԶԻՆՀԱԲ հարթակը, ինչպես նաև սոցիալական ծրագրերը, որոնք իրականացվել են հիմնադրամի գործունեության ընթացքում: Հանդիպումն ամփոփվեց հարց ու պատասխանով: Ելնելով անհրաժեշտությունից և շահառուների արձագանքներից՝ հանդիպումները կլինեն շարունակական:



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն 2024թ. 1-ին ԵՌ.

2024թ. հունվարի 18-ին փոխըմռնման հուշագիր է ստորագրվել **«Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ»**-ի հետ:

2024թ. փետրվարի 29-ին փոխըմռնման հուշագիր է ստորագրվել **«Հայաստանի Հանրապետության Հաշմանդամային Սպորտի Ֆեդերացիա»** ՀԿ-ի հետ՝ ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին ֆիզիկական առողջության վերականգնմանն աջակցելու նպատակով:

ԶԻՆԱՊԱՀԻ զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2017թ. հիմնադրման ժամանակ ԶԻՆԱՊԱՀԸ կառավարվում էր Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից կամավորական սկզբունքով, իսկ 2021թ. սկսած ԶԻՆԱՊԱՀԸ տարանջատվում է ԿԲ-ից՝ դառնալու անկախ իրավաբանական կառույց իր սեփական ենթակառուցվածքով:

ԹԻՄ

- Ղեկավար մարմինն է՝ Հոգաբարձուների խորհուրդը 5 անդամներով
- Կառուցվածքային փոփոխություն՝ կենտրոնանալով ԶԻՆԱՊԱՀԻ՝ որպես ֆինանսական կառույց հիմնական իրավասությունների վրա: Ներկայումս կառավարվում է 13 հոգուց բաղկացած թիմի կողմից
- Կազմակերպչական ձեռնարկի հաստատում
- Կատարողականի և գնահատման համակարգի փորձնական ներդրում թվային Teamflect համակարգով

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաղորդակցման քաղաքականության հաստատում
- Ներդրումային քաղաքականության ընդունում
- Սթրեսի սցենարների պլանավորում
- Գնումների կանոնակարգի ընդունում
- ԶԻՆԱՊԱՀԻ վերաբրենդավորման արշավների մեկնարկ
- ԶԻՆՀԱԲ հարթակի ներդրում
- 2023 աուդիտի գործընթաց

ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- ՄՌ կառավարում
- Հաշվապահական ծառայությունների նոր գործընկերոջ ընտրություն 2024թ.
- Հաճախորդների զանգերի կենտրոն
- SS անվտանգություն
- Իրավախորհրդատու

ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

- ԶԻՆԱՊԱՀԻ կայքի և ենթակառուցվածքների մշակում
- Դրոշմանիշային վճարների վերադարձի պարտադիր գործընթացի ավտոմատացում
- Ֆինանսական ենթակառուցվածքների մշակում հատուցումների ծրագրի հենքով
- SS անվտանգության քաղաքականության մշակում

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԶԻՆԱՊԱՀԻ օրենքի փոփոխություն՝ աջակցելու հաշմանդամության կարգավիճակի փոփոխությանը
- Սոցիալական ծրագրերի իրականացման կանոնակարգի մշակում
- Շահառուների՝ հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցման ծրագիր
- 2008-2017թթ. ԶԻՆԱՊԱՀԻ հատուցումների միավորում

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել Հայաստանի և ամբողջ աշխարհի բոլոր անհատներին, կազմակերպություններին/համայնքներին, ովքեր կատարել են իրենց պարտադիր դրոշմանիշային վճարումները և անհատական նվիրատվությունները:

Ձեր աջակցության շնորհիվ ԶԻՆԱՊԱՀԸ կարողանում է իրականացնել իր առաքելությունը՝ հոգալ այն զինծառայողների և նրանց ընտանիքների կարիքները, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերել են հանուն Հայաստանի և նրա սահմանների անվտանգության:
ԶԻՆԱՊԱՀ

Միասին՝ զինվորիս կողքին...

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՑԵՔ ՄԵԶ

ՃԱՆԱՉԵՔ ՄԵԶ

Իմացեք ավելին ԶԻՆԱՊԱՀԻ մասին։
Այցելեք մեր կայքը, հետևեք մեզ
սոցիալական հարթակներում։

ԱՋԱԿՑԵՔ ՄԵԶ

Կատարեք ձեր նվիրատվությունը և աջակցեք
զինվորներին ու նրանց ընտանիքներին,
ովքեր զոհաբերել են ամենակարևորը՝ իրենց
կյանքն ու առողջությունը հանուն Հայրենիքի։

ՊԱՏՄԵՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Պատմեք մեր առաքելության և
կատարած աշխատանքի մասին։

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

@zinapah

zinapah.am

info@zinapah.am

Վազգեն Սարգսյան փող. 26/1
Երևան, 0010, ՀՀ

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ